ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

17 ՆՈՅԵՄԲԵՐԻ, 2016 թ.
№ 13 (998)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 51 -րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Հայ-չինական համագործակցություն գիտակրթական ոլորտում

ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը ՀՀ ԿԳ նախարար Լևոն Մկրտչյանի գլխավորած պատվիրակության կազմում նոյեմբերի 12-ից 15-ը այցելել է Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն:

Հայաստանյան պատվիրակությունը հանդիպում է ունեցել ՉԺՀ կրթության նախարար Չեն Բաո Չենի հետ:

Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն կրթության նախարարի հրավերը միտված էր երկու երկրների համագործակցությանը գիտակրթական ոլորտում:

Հանդիպումները Չինասատանի գիտակրթական ոլորտի ներկայացուցիչների հետ հետագա համագործակցության նոր զարգացումներ են ուղենշել. մասնավորապես երկրների միջպետական միջպետական համաձայնագրի շրջանակներում տեղի ունեցած քննարկումների արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել միջազգային նոր կապերի ստեղծման և ընդլայնման վերաբերյալ:

Տեղի են ունեցել հանդիպումներ Պեկինի մանկավարժական, ինչպես նաև Պեկինի օտար լեզուների համալսարանների ղեկավարության հետ:

Պեկինի մանկավարժական համալսարանի ռեկտոր Դոնգ Ցինի հետ քննարկվել են Չինաստանի Ժողովրդական Հանրապետության մանկավարժական համալսարանի հետ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի համագործակցության հեռանկարները:

Քննարկումների ընթացքում նաև ձեռք է բերվել պայմանավորվածություն Պեկինի օտար լեզուների համալսարանում հայերենը որպես մասնագիտություն ուսուցանելու վերաբերյալ:

Միջազգային հարթակում

Մանկավարժական համալսարանի «Իմաստություն» գիտական պարբերականն ընդգրկվել է ԲՈՀ-ի ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների (դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների համար) ցուցակում և գրանցված է Scientific Indexing Services (SIS), Journal Impact Factor (JIF), Eurasian Scientific Journal Index (ESJI), Scientific Journal Impact Factor (SJIF), International Scientific Indexing (ISI), European Reference Index for the Humanities and Social Sciences (ERIH PLUS), և Advanced Scientific Index (ASI), eLIBRARY, EBSCO, CYBERLENINKA միջազգային գիտաչափական շտեմարաններում:

Ժողովածուն հրատարակվում է Մանկավարժական համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ, տարեկան երկու անգամ և գիտական արժեքավոր գաղափարների ու հետազոտությունների արդյունքները հրապարակելու, դրանց շուրջ քննարկումներ ու բանավեճեր կազմակերպելու լավագույն հարթակ է:

Հանդեսը կարևորում է հատկապես հումանիտար, հասարակագիտական, փիլիսոփայական գիտելիքի բնագավառներում հետազոտություններն ու դրանց հիման վրա երաշխավորություններ առաջարկող հոդվածների հրապարակումը:

ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մանկավարժական համալսարանի Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետում գործող Աշխարհագրության գիտակրթական ուսումնափորձնական լաբորատորիան անվանակոչվեց հայտնի աշխարհագրագետ, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԽՍՀՄ մանկավարժական գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Լեմվել Վալեսյանի անունով:

«Նա հեղինակություն էր. իրական, հանգիստ, հանդարտ, վճռական և միաժամանակ սկզբունքային: Գիտության մեջ ուներ իր ուրույն խոսքն ու կշիռը: Այս լսարանը հնարավորություն է տալիս ևս մեկ անգամ ուսանողներին





ասել, թե ով է եղել Վալեսյանը: Ավելի կարևոր հիշատակի հավերժացում դժվար է գտնել, քան գործող հաստատության մեջ ունենալ նրա անունով լսարան: Այն հնարավորություն է տալիս գործնականում վերհիշել, պատմել և խոսել նրան մասին»,-լաբորատորիայի բացման արարողությանն ասաց բուհի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը: Ռեկտորն ընդգծեց, որ մանկավարժական հաստատությունը ղեկավարելու տարիներին Լեմվել Վալեսյանը բուհի գործունեությունում յուրահատուկ և բացառիկ դերակատարություն է ունեցել:

➤ 3

ՄԵՐ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Մանկավարժական համալսարանի վոլեյբոլի աղջիկների հավաքականը մասնակցեց Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի «Ռեկտորի գավաթ» առաջնությանը: Նախորդ խաղերում գրանցած հաջողությունների շնորհիվ ՀՊՄՀ-ի վոլեյբոլի աղջիկների թիմը հայտնվեց եզրափակչում: Եզրափակիչ վճռորոշ խաղում Մանկավարժական համալսարանի թիմը մրցեց Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի Կենսաբանության և քիմիայի ֆակուլտետի թիմի հետ: Գրանցելով 3:2 հաշիվը՝ Մանկավարժական համալսարանի վոլեյբոլի աղջիկների հավաքականը նվաճեց Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի գավաթը:

Սխալվելու իրավունք այլևս չունենք

«Մենք դարերով պետականություն չենք ունեցել, բայց պետականաստեղծ ազգ ենք: Ազատության, հայրենիքի և պետականության գաղափարին ծառայելու լավագույն միջոցն այն է, որ յուրաքանչյուրս մեր գործն անի: Պետք է ձգտենք ոչ թե ձևը ցույց տալ, այլև առաջնորդվենք բովանդակությամբ: Այսօր գերագույն արժեքը կիրթ, գրագետ, հայրենասեր հայն է: Պետք է մտածենք՝ ոչ թե ինչ կտա Հայաստանը մեզ, այլ՝ ինչ կարող ենք տալ մենք հայրենիքին, և այդ ժամանակ կունենանք հզոր ու միասնական Հայաստան: Այլընտրանք չունենք, սխալվելու իրավունք չունենք, պետք է հասկանանք՝ հայի ճակատագիրը որոշվում է Արցախում, և բոլորիս հայացքները պետք է ուղղենք այնտեղ»,- ասաց ՀՀ ԱԺ փոխնախագահ, ՀՊՄՀ խորհրդի անդամ, բուհի շրջանավարտ Էդուարդ Շարմազանովը Մանկավարժական համալսարանում կայացած «Ազգ, պետություն, հայրենիք, պետականության գաղափարը» խորագրով միջազգային գիտաժողովի բացմանը: Միջազգային գիտաժողովը նվիրված էր Հայաստանի Անկախության 25-ամյակին, որին մասնակցում էին Իսպանիայի, Ռուսաստանի, Հունգարիայի, ԼՂՀ-ի, ինչպես նաև ՀՀ գիտակրթական մի շարք հաստատությունների, բուհերի ներկայացուցիչներ և ուսանողներ:

ԱԺ փոխնախագահը, հայ ժողովրդի համար կարևորելով պետության, պետականության գաղափարը, ազատ և անկախ հայրենիքում ապրելու ձգտումը, նկատեց՝ հայ ժողովրդի պատմությունը ոչ այլ ինչ է, քան պայքար անկախության և ազատության համար: Նա պատմական ակնարկով հիշեցրեց դեռևս Ք.ա. 2492 թվականը, երբ մեր նախահայր Հայկը հաղթեց հին աշխարհի չարի խորհրդանիշ հանդիսացող Բելին: Էդուարդ Շարմազանովը ևս մեկ անգամ ընդգծեց, որ հայ ժողովրդի անկախության և ազատության ձգտումը նկատելի է Ցեղասպանության ժամանակահատվածից սկսած մինչև ապրիլյան քառօրյա պատերազմ: ԱԺ փոխնախագահն անդրադարձավ նաև անկախության սերնդին, որը վերջին պատերազմական իրադարձությունների ժամանակ ապացուցեց՝ ոչնչով չի զիջում արցախյան առաջին ազատամարտի հերոսներին, դեռ մի բան էլ գերազանցում է, իսկ նրանց սխրանքը սխալվելու իրավունք այսօր այլևս չի տալիս:

Պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանը նկատեց, որ գիտաժողովը հնարավորություն է տալիս հերթական անգամ արժևորել և անդրադառնանալ այն երեք հիմնական գաղափարներին ու արժեքներին, որոնք ընկած են պետականության հիմքում՝ հայրենիք, ազգ, պետական գաղափարախոսություն:

«Երբ ազգը, պետությունն անկախության ճանապարհ են անցնում, անհրաժեշտություն է առաջանում գիտական հանրության կողմից պարբերաբար ամփոփումներ կատարել, գնահատել ձեռքբերումները և, ինչու չէ, նաև ներկայացնել բացթողումներն ու թերությունները: Պետության գաղափարախոսության ամենամեծ արժեքն անկախությունն է, իսկ անկախության գլխավոր արժեքն ու ձեռքբերումն անկախության սերունդն է, սերունդ, որն արդեն Հայաստանը չի պատկերացնում այլ կերպ, քան անկախ, սերունդ, որը վաղն իր ուսերին է կրելու նախորդ սերնդի ձեռք բերած հաջողություններն ու նպաստելու է երկրի, պետության զարգացմանը»,- նկատեց Էդգար Հովհաննիսյանը:

Նա կարևորեց գիտաժողովին ուսանողների մասնակցությունը և հույս հայտնեց, որ այս ձևաչափի գիտաժողովը կդառնա ավանդական:

Քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լևոն Շիրինյանն էլ վերհիշեց, որ 25 տարի առաջ նման լսարաններում հավաքվում և քննարկում էին ազգային ազատագրական պայքարի հարցեր, և այդ ամենը բնական էր, քանզի այդ ժամանակ կար ժողովրդի կոնսոլիդացիայի և մոբիլիզացիայի խնդիր, իսկ այսօր, ըստ քաղաքագետի, բավականին առաջ ենք գնացել, արդեն քննարկվում են պետականության կերտման և հայրենիքի ու պետության պաշտպանության հարցերը:

Հայաստանի ազգային կրթության կայացման ու զարգացման գործում Սփյուռքի դերակատարությանն անդրադարձավ Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան մանկավարժական համալսարանի գիտաշխատող Եկատերինա Ռոևան: Բանախոսը նկատեց, որ գործընթացի կայացման ընթացքում ՀՀ-ն հաղթահարել է մի շարք դժվարություններ, իսկ այժմ արդեն լայն հնարավորություն ունի զարգանալու և առաջ գնալու: Եկատերինա Ռոևան ընդգծեց, որ 90-ական թթ. սկսած մեծ ուշադրության կենտրոնում է Հայաստանի ազգային պետականությանն առնչվող հարցերը: Հայ սփյուռքը ևս հայ ազգային կրթության և զարգացման գործում ունի իր մեծ ներդրումը:

Գիտաժողովի մասնակիցներից ոմանք օնլայն տարբերակով ներակայացրին իրենց զեկուցումները, իսկ ավարտին ծավալվեց հարցուպատասխան:

Գիտաժողովը կազմակերպվել էր Պատմության և իրավագիտության ֆակուլտետի նախաձեռնությամբ, գիտաժողովի նյութերը կտպագրվեն Պատմության և իրավագիտության ֆակուլտետի «Պատմություն և հասարակագիտություն» գիտական տարեգրքում:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

Միջազգային համաժողով Մոսկվայում

ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը մասնակցել է Մոսկվայում կայացած միջազգային ֆորումին՝ «ԱՊՀ 25 տարին. փոխըմբռնում, համագործակցություն, զարգացում» խորագրով:

Միջազգային համաժողովին մասնակցել են ԱՊՀ երկրների և Ռուսաստանի շուրջ 500 ներկայացուցիչներ, անց է կացվել40 կլոր սեղան, որոնց շուրջ տեղի են ունեցել ինտեգրացիոն գործընթացներին, կրթության, գիտության, երիտասարդական քաղաքականության, կառավարությունների համագործակցության և բիզնեսի հումանիտար ոլորտների վերաբերյալ քննարկումներ:

Համաժողովը տեղի է ունեցել Ռոսսոտրուդնիչեստվո-ի նախաձեռնությամբ և ՌԴ արտգործնախարարության աջակցությամբ:

Միջազգային հարաբերությունների նոր որակ

Մանկավարժական համալսարանի միջազգային համագործակցային կապերն օրեցօր ընդլայնվում են: 21-րդ դարում որևէ երկիր, ցանկացած ուսումնական հաստատություն, այդ թվում և մեր բուհը չի կարող մեկուսանալ աշխարհից: Մանկավարժական համալսարանը ձեռք է բերում գործունեության նոր որակ, որով առավել գրավիչ է դարձնում ուսուցումն ու մասնագիտությունների հանդեպ հետաքրքրությունը:

Համալսարանի հյուրն այս անգամ Հայաստանում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության դեսպան Թիեն Ըլոնգն է: Դեսպանը բարձրագույն կրթություն է ստացել Հայաստանում, Հայաստանի հետ կապված հուշեր ունի ու մի փոքր լարվածություն կա, որը, սակայն, տեղի է տալիս համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի հետ ջերմ ու անկեղծ հանդիպման մթնոլորտում, ուր երկուստեք մատնանշվում են առաջիկա համագործակցության հնարավոր ուղիները:

Թեև Մանկավարժական համալսարանում առայժմ սովորում է երեք չինացի, սակայն ռեկտորը վստահ է, որ հայ-չինական հարաբերությունների սերտացմանը զուգահեռ այդ թիվը կմեծանա: Նույն կարծիքին է նաև դեսպանը. անհրաժեշտ է միայն «բարեկամական, օգտակար և արդյունավետ համագործակցություն», ինչպես նաև գործնական մոտեցում թղթի վրա ամրագրված ուղղություններին:

Դեսպանը համեմատությունների միջոցով ներկայացնում է երկու երկրների ընդհանրություններն ու նմանությունները, նաև ընդգծում հայ-չինական պատմության ու մշակույթի առանձնահատկությունները:

Երկու երկրներում էլ ուսուցչի և կրթության հանդեպ սերը պաշտամունքային է, ինչը երկու ժողովուրդների գեներով է գալիս, հայ-չինական ժողովուրդները աչքի են ընկնում նաև ընտանեկան գեղեցիկ ավանդություններով...

Անհամեմատ տարբեր են կրթական հաստատությունների և սովորողների թվերը Չինաստանում և Հայաստանում: Դեսպանը հպարտությամբ նշում է, որ իր երկիրը հաջողությունների է հասել ոչ միայն կրթական, այլև սոցիալ-տնտեսական ոլորտում:

Ամփոփելով ասելիքը՝ դեսպանն ընդգծում է, որ ակնկալում է անկեղծ ու լայնամասշտաբ հարաբերություններ գիտակրթական ոլորտում, և վստահեցնում, որ կանի ամեն բան նախանշված ուղղությունները առաջիկայում գործնական հարթություն տեղափոխելու համար:

Հանդիպումն էլ ավելի ջերմանում Մանկավարժական համալսարանի համար 57 հիմնական դպրոցի աշակերտների ելույթով. արդեն երկու տարի է, ինչ դպրոցում դասավանդվում է չինարեն լեզուն, և երկրորդ դասարանի աշակերտները այդ լեզվով երգ ու ասմունքով ողջունում եմ դեսպանին և ներկաներին:

Առարկայի դասավանդման հաջողությունների մասին է պատմում դպրոցի տնօրեն Նաիրա Տողանյանը՝ փաստելով, որ մտավախություններն անցյալում են:

Մանկավարժական համալսարանի Օտար լեզուների ֆակուլտետի չին շրջանավարտ Վան Հայջնը, որ գերազանց առաջադիմությամբ սովորել է բակալավրիատում և մագիստրատուրայում, այժմ ասպիրանտուրայի սովորող է: Նա շնորհակալություն է հայտնում Մանկավարժական համալսարանին՝ իրեն որակյալ կրթություն տալու համար, և դասախոսներին, որոնց շնորհիվ սիրեց Հայաստանն ու սովորեց ռուսաց լեզուն:

Հանդիպման ընթացքում համալսարանական մի շարք ամբիոնների վարիչներ ներկայացրին իրենց մատուցած մասնագիտությունների առանձնահատկությունները՝ փորձելով մատնանշել համագործակցության հնարավոր ուղիները:

Դե ինչ, համալսարանը մտնում է հայ-չինական հարաբերությունների փուլ՝ միջազգային կապերի աշխարհագրության մեջ իրար մոտեցնելով Հայաստան-Չինաստան տարածքային սահմանները:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Եվրոպայում հայագիտության զարգացման նոր հեռանկարներ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի միջազգային համագործակցության կապերին ավելացավ ևս մեկը. 2016 թվականի սկզբներին Մանկավարժական համալսարանում կնքված երկկողմանի համաձայնագրի շրջանակներում արդեն լուրջ քայլեր են արվում. Պիտեր Պազմանի անվան Կաթոլիկ համալսարանի հետ Մանկավարժական համալսարանը սկսել է իրականացնել գիտակրթական ոլորտին առնչվող տարբեր ծրագրեր: Համագործակցության հիմնաքարը Կաթոլիկ համալսարանում հայագիտության ամբիոնի բացումն էր՝ բուհի համար բավականին կարևոր ու լուրջ քայլ Եվրոպայում:

ՀՊՄՀ ռեկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանը և նոր ամբիոնի վարիչ նշանակված հայագետ Բալինտ Կովաչը, ով մեծապես աջակցեց հայագիտական ամբիոնի բացմանը, մեծ հեռանկարներ են նշմարում երկու համալսարանների համագործակցության մեջ, որտեղ կարևորը հայագիտության ասպարեզում ընդլայն-

վելու, ուսանողների և դասախոսների փոխանակման և այլ ծրագրերն են:

Ձեռքբերումներից ամենակարևորն այն է, որ 2016 թվականից Պիտեր Պազմանի Կաթոլիկ համալսարանի հումանիտար և հասարակական գիտությունների ֆակուլտետի պատմության ինստիտուտի ուսանողներն արդեն կարող են կրթություն ստանալ հայագիտություն մասնագիտացմամբ, իսկ 2017-ից արդեն կիրականացվի հայագիտության գծով մագիստրոսական կրթական ծրագիր:

Երկու համալսարանների ուսանողները փոխանակման ծրագրով փոխադարձաբար մեկ կիսամյակ կսովորեն համապատասխան համալսարաններում, նշենք, որ այդ քայլը երկուստեք ոգևորիչ է. մտահորիզոնի ու աշխարհայացքի ընդլայնում, նոր ուսումնառություն ու գիտելիքներ, նոր հաղորդակցություն ու շփումներ կրթական և մշակութային մերձեցումներ ու երկխոսություն, ինչին միտված է աշխարհն այսօր:

Վատիկանի հովանու ներքո գործող այս բարձրագույն պետական ուսումնական հաստատությունը հիմնադրվել է Օսմանյան շրջափակման տարիներին՝ 1635թ-ին, այն կառուցել է արքեպիսկոպոս Պիտեր Պազմանին: Համալսարանը դարձել է ազգային մշակույթի, կրոնի, գոյապահպանության, եվրոպական մշակութային առանձնահատկությունների պահպանման երաշխավորը:

Համալսարանում գործում են ժամանակակից հետազոտական կենտրոններ ու լաբորատորիաներ՝ նանո-բիո տեխնոլոգիաների, սենսորային ծրագրավորման, տելեներկայություն և լեզվական տեխնոլոգիաների հետազոտական ուղղություններով:

Երկու համալսարանների ներկայացուցիչների ու շահագրգիռ անձանց հանդիպումը կաթոլիկ համալսարանում ամփոփվեց հաճելի արարողությամբ. ՀՊՄՀ ռեկտորն արժանացավ Պիտեր Պազմանի անվան Կաթոլիկ համալսարանի «Պիտեր Պազմանի» մեդալի: Համալսարանի բարձրագույն պարգևին արժանանալը մեծագույն պատիվ է ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, արվեստի վաստակավոր գործիչ Ռուբեն Միրզախանյանի համար: Այն ավելի խորհրդանշական է դառնում, երբ իմանում ես հունգարացի կարդինալ, փիլիսոփա, աստվածաբան, հռետոր, հունգարական գրական արձակի հիմնադիր Պիտեր Պազմանի կյանքի ու գործունեության պատմությունը:

Մանկավարժական համալսարանի համար մեծապես կարևոր քայլ էր Եվրոպայում՝ մասնավորապես Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանում հայագիտության ամբիոնի բացումը: Սա դեռ սկիզբն է, որ նոր ու հետաքրքիր համագործակցության հեռանկարներ ու զարգացումներ է խոստանում:

ԿՈՆՍՈՑԻԱԼ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի քաղաքագիտության բաժինը ՀՊՄՀ Քաղաքագիտության և իրավունքի պատմության ամբիոնի, Ժողովրդավարության և երկքաղաքական հետազոտությունների կենտրոնի և Հայկական քաղաքագիտական կայքի օժանդակությամբ կազմակերպել էր «Կոնսոցիալ ժողովրդավարություն. քաղաքական մորֆոլոգիան և իրացման պոտենցիալ» թեմայով գիտաժողով:

Գիտաժողովին բացման խոսքով հանդես եկավ Մանկավարժական համալսարանի քաղաքագիտության և իրավունքի պատմության ամբիոնի վարիչ Լևոն Շիրինյանը, ով գիտաժողովի կայացումը համարեց երկար տարիների պրպտման արդյունք:

«Ժողովրդավարական վարչակարգերի արդյունավետությունը հիմնականում պայմանավորված է այն սոցիալական միջավայրով, որտեղ նրանք գործում են: Ժողովրդավարական վարչակարգերի բազմազանության մեջ առանձնահատուկ տեղ և նշանակություն ունի կոնսոցիալ ժողովրդավարությունը: Այս մոդելը կիրառելի է ինչպես բազմակազմ, այնպես էլ միակազմ հասարակությունների համար»,- նկատեց քաղաքագետը:

Լևոն Շիրինյանը նշեց, որ կոնսոցիալ ժողովրդավարության մոդելը հատկապես հետաքրքրական է ուսումնասիրել զարգացման տեսության համատեքստում:

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տնօրեն Գևորգ Պողոսյանի նկատեց՝ գիտաժողովի նորույթն այն է, որ թեման հենց տեղում ուսումնասիրվում է, քննարկվում ու մշակվում:

Գիտաժողովում զեկուցումներով հանդես եկան հանրապետության տարբեր բուհերից և ակադեմիական շրջանակներից հրավիրված մասնագետներ: Նրանք ներկայացրին նաև կոնսոցիալ ժողովրդավարությունն արդի քաղաքագիտական խոսույթում, կոնսոցիալ խոսույթի հնարավորությունը այսրկովկասյան պետությունների և ժողովուրդների մշակույթում, նրա հոգեբանական առումները, մոդելը տարասեռ հասարակության մեջ, քաղաքական որոշումների ընդունման գործընթացում կառավարող ընտրանիների միջև փոխհամագործակցությունն ու կոնսոցիալ գիտությունների հայեցակարգը, ինչպես նաև ժողովրդավարության մակարդակի ինդեքսը. Հայաստանի ժողովրդավարության վրա ազդող գործոնները:

Ելույթներին հաջորդեց ակտիվ քննարկում:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

➤ 1 Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Աշոտ Խոյեցյանը Մանկավարժական համալսարանի կյանքում այս օրը հիշարժան համարեց: «Այն խորհրդանշվում է նրանով, որ աշխարհագրության զարգացման գործի նվիրյալ մի մարդու անունով ենք անվանակոչում այս լաբորատորիան: Նա աշխարհագրության՝ գիտության 20-րդ դարի երկրորդ կեսի կարկառուն դեմքերից մեկն էր, ով իր ստեղծագործ և գիտակից ողջ կյանքը նվիրեց կրթության բնագավառին, և նրա հիշատակը հավերժացնելու լավագույն քայլն է սա»,- նշեց Աշոտ Խոյեցյանը:

Ներկայացնելով Վալեսյանի գիտական գործունեությունն ու ունեցած ավանդը՝ պրոֆեսորը նկատեց, որ Վալեսյանը գիտահետազոտական շատ մեծ, լայն շրջանակներ ունեցող գիտնական էր, բայց առաջինը կարևորեց մանկավարժաշինության գործում ունեցած նրա դերը:

ՀՊՄՀ էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի վարիչ Կարինե Դանիելյանը վերհիշեց Վալեսյանի հետ իր ծանոթությունը, մասնագիտական գործունեության ընթացքում մեծ գիտնականի իրականացրած աշխատանքները: «Նա գիտության մեջ այնպես էր կողմնորոշվում, հասկանում բոլոր ուղղություններն ու դրանց նշանակությունը: Նա հարգանք ու պատիվ էր վայելում ուսանողների մոտ, նրան գիտեին նաև գիտական միջազգային ասպարեզներում: Տարիներ կանցնեն, և սերունդները կգնահատեն, թե ինչ գիտնական ենք ունեցել, և հնարավորինս պետք է շարունակենք նրա գործը»,- ասաց Կարինե Դանիելյանը:

ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ Ակսել Պոտոսյանը, 20 տարի աշխատելով գիտնականի հետ, նրա մասին խոսելը միաժամանակ հեշտ և դժվար համարեց: «Նա հանրապետական և միջազգային մեծ ճանաչում ունեցող գիտնական էր և արժանի է այս ամենին: Նա գիտնականի կարողություններ զուգակցեց մանկավարժական գործունեության հետ»,- ասաց Ակսել Պոտոսյանը և հավելեց, որ Վալեսյանի մի քանի աշխատություններ դեռևս անգերազանցելի են մնում:

Լեմվել Վալեսյանի բարեկամուհին՝ Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի աշխարհագրության ամբիոնի դոցենտ, գիտությունների թեկնածու Անահիտ Վալեսյանը, բարձր գնահատեց բուհի ղեկավարության կողմից լսարանի բացումը: «Քիչ գիտնականներ կան, որ ունեն նրա կշռի և բազմաբովանդակային աշխատանքային գիտական գործունեությունը: Շատ կարևոր է այս քայլը, քանզի սերունդներ կան, որոնք չեն իմացել գիտնականին, չնայած որ նրա հեղինակած դասագրքերով են սովորել: Այս կերպ նրանք ավելի շատ կծանոթանան և կտեղեկանան գիտնականի գործունեությանը և կշարունակեն նրա գիտական ուղղությունները»,- նկատեց Անահիտ Վալեսյանը:

Լեմվել Վալեսյանը աշխարհագրության ապագան տեսնում էր նրա տեսականացման մեջ, ով կողմնակից էր վերահայտնագործող աշխարհագրությանը, ով աշխարհագրությունը մեծ երկրների մենաշնորհը լինելուց զատ համարում էր պետականության ատրիբուտ:

Գնահատելի և ուսանելի է Վալեսյան գիտնականի անսահման սերն աշխարհագրության հանդեպ, նրա որոնումներն ու պրպտումներն աշխարհագրության իրական տեղի ու դերի ճշգրտման շուրջ:

Ակնառու է նաև Վալեսյան գիտնականի ծավալած մանկավարժական գործունեությունը: Վալեսյանը հեղինակ է 340 գիտական աշխատության, այդ թվում՝ 35 մենագրությունների, համալիր ատլասների, դպրոցական և բուհական դասագրքերի:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

«Ռուսաց լեզվի և գրականության դասավանդումը Հայաստանում շնորհակալ աշխատանք է», –

ասում է պրոֆեսոր Բելլա Եսաջանյանը

Մանկավարժական համալսարանում հոկտեմբերի 20-ին անցկացվեց կոնֆերանս՝ նվիրված ռուսաց լեզվի և գրականության դասավանդման ու մեթոդիկայի ժամանակակից հիմնահարցերին: «Ռուսական հումանիտար էքսպեդիցիան Հայաստանում» նախագծի շրջանակներում կոնֆերանսը կազմակերպվել էր Հայաստանում «Ռոսսոտրուդնիչեստվո»-ի, Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի և Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի համատեղ նախաձեռնությամբ:

«Ռուսաց լեզվի և գրականության դասավանդման գիտամեթոդական հիմքերը ժամանակակից պայմաններում» խորագրով կոնֆերանսի բացման արարողությանը ներկաներին ողջունեցին և ելույթ ունեցան Հայաստանում «Ռոսսոտրուդնիչեստվո»-ի, Երևանում գիտության և մշակույթի ռուսական կենտրոնի, ՀՊՄՀ-ի ռուսաց լեզվի և գրականության և նրա դասավանդման ամբիոնի, ռուսաց լեզվի ու գրականության խնդիրներով մտահոգ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի ներկայացուցիչները հանդես եկան «Նորարարական գործընթացները ընդհանուր և մանկավարժական կրթության մեջ. Մոսկվայի պետական մանկավարժական համալսարան» խորագրով զեկուցումներով:

Կոնֆերանսին մասնակցող Երևանի և հարակից շրջանների դպրոցների և նախակրթական հաստատությունների ռուսաց լեզվի և գրականության մասնագետների ու ղեկավարների համար կազմակերպվել էր ուսումնական գրքերի ու ձեռնարկների ցուցահանդես, ինչպես նաև հանդիպում Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի գիտնական դասախոսների և գիտամեթոդական գրականության հեղինակների հետ:

Կոնֆերանսի օրակարգը բավականին հագեցած էր և արդյունավետ Հայաստանի ռուսաց լեզվի ուսուցիչների համար: Առարկայի դասավանդման նոր մոտեցումների ու փորձի փոխանակման, հետաքրքիր երկխոսության արդյունքում նոր բացահայտումներ եղան:

Մ. Վ. Սարապասը հանդես եկավ «Դպրոցական բանասիրական կրթության հայեցակարգերը» (ռուսաց լեզու և գրականություն) զեկուցումով, այնուհետև Յա. Ա. Աստախովան անցկացրեց վարպետության դաս. Գիտությունը դպրոցում (Տեքստի բանասիրական վերլուծությունը Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի բանասիրական ինստիտուտի ռուսաց լեզվի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ն. Ա. Նիկոլինայի ձեռնարկի հիման վրա):

Տ. Ա. Սեմյոնովան անցկացրեց սեմինար-պրակտիկում «Ակտիվ հմտությունների ձևավորումը որպես ինքնակրթության միջոց» վերնագրով:

«Ռուսաց լեզվի և գրականության դասավանդումը Հայաստանում շնորհակալ աշխատանք է»,-ասաց ,,Ռուսաց լեզուն Հայաստանում,, ամսագրի խմբագիր, պրոֆեսոր Բելլա Եսաջանյանը՝ հավելելով, որ Մանկավարժական համալսարանի համագործակցությունը Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի հետ արդյունավետ է, որ մեր համալսարանի ռուսաց լեվի և գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը լավագույններից է, ունի պատրաստված մասնագետներ: Սակայն պրոֆեսորը փաստեց՝ որքան էլ լավ դասավանդեն՝ մշտապես կա ավելի լավին հասնելու ձգտումը, իսկ դասը մշտապես պահանջում է ստեղծագործական աշխատանք:

Պրոֆեսորը բարձրաձայնեց, որ համալսարանն աստիճանաբար անցնում է երկլեզվյան ուսուցման, ինչը առաջընթաց է և հպարտանալու առիթ: Հայերը պետք է տիրապետեն երկու լեզվի և առաջինը՝ ռուսաց լեզվին: Գիտական աշխատանքի համար բավարար գրականություն չկա և այստեղ մեծ է ռուսաց լեզվի դերը:

Պրոֆեսորը վերջում շնորհակալություն հայտնեց այն խանդավառության համար, որով Հայաստանում դասավանդվում է ռուսաց լեզուն:

Ըստ Հայաստանում ռուսաց լեզվի ուսուցիչների կենտրոնի տնօրեն Լիլյա Բալասանյանի Հայաստանն ակտիվորեն համագործակցում է նախկին ԱՊՀ երկրների հետ: Նա հորդորեց ռուսաց լեզվի մասնագետներին՝ ակտիվորեն մասնակցել նման սեմինարներին ու հանդիպումներին՝ ռուսաց լեզվի ու գրականության դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու և փորձի փոխանակման համար:

«Վերջերս Մանկավարժական համալսարանի պատվիրակությունը եղավ Մոսկվայում. ձեռք բերեցինք ռուս գործընկերների, մեր կոլեգաների հետ համագործակցության պայմանավորվածություն և պարբերաբար երկխոսություն ռուսաց լեզվի ու գրականության դասավանդման ժամանակակից մեթոդիկաների շուրջ»- ասաց ՀՊՄՀ ռուսաց լեզվի և գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Իննա Սարգսյանը:

Երկօրյա կոնֆերանսի երկրորդ օրը միջոցառման նախաձեռնողները «Սովորում ենք ռուսաց լեզուն, ուսումնասիրում ենք ռուսական մշակույթը» խորագրի ներքո անցկացրին վարպետության դասեր:

Կոնֆերանսը բավականին արդյունավետ էր. մասնագետներն իրար հետ փոխանակեցին հանրակրթական դպրոցներում ռուսաց լեզվի դասավանդման իրենց նորարարական մոտեցումները, քննարկեցին ու միասին գտան շատ հարցերի պատասխաններ:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Տեղեկատվական հանդիպում Մանկավարժականում

«Էրազմուս+» տեղեկատվական հանդիպումների շրջանակում Մանկավարժական համալսարանում տեղի ունեցավ Հիմնական Գործողություն 2-ին (Կարողությունների զարգացում բարձրագույն կրթության ոլորտում՝ նախկին Տեմպուս ծրագիր) նվիրված նիստը: «Էրազմուս+» տեղեկատվական քարոզարշավի բաղկացուցիչ մասն է կազմում հենց տեղեկատվական օրերը Երևանում, որը նպատակ ունի առանձին-առանձին անդրադառնալ «Էրազմուս+» ծրագրի հիմնական գործողություններին:

Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանն ուրախությամբ արձանագրեց, որ երեք ծրագիր համակարգելու են հայաստանյան բուհերը, որից մեկը վստահված է Մանկավարժական համալսարանին՝ նվիրված կրթության միջազգայնացմանը: «Մենք ամենայն պատասխանատվությամբ ենք վերաբերվում այս հանգամանքին, քանզի գտնում ենք, որ համալսարանների միջազգայնացումը կարևորագույն պայմանն է կրթության նոր որակ ապահովելու գործում»,- ասաց ռեկտորը և հավելեց, որ միջազգայնացումը ենթադրում է նաև օտարերկրյա ուսանողների և պրոֆեսորների առկայություն և համապատասխան գործունեություն համալսարանում:

«Այդ ամենը ենթադրում է նաև այլ մոտեցում ունենալ ուսումնական ծրագրերի պահանջներին: Մանկավարժական համալսարանը լի է վճռականությամբ լուծելու այդ խնդիրները. բուհն արդեն ունի այն պոտենցիալը, որով մենք կփորձենք հաջողությամբ պսակել խնդրո առարկայի լուծումը»,- ամփոփեց ռեկտորը:

ՀՀ ԿԳՆ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության քաղաքականության մշակման բաժնի պետ Էդգար Ալեքսանյանը կարևորեց ԿԳՆ-ի մասնակցությունը վերոնշյալ ծրագրերին: Խոսելով «ՏԵՄՊՈՒՍ» ծրագրի մասին՝ Էդգար Ալեքսանյանը նկատեց. «Արդեն ունենք բազմաթիվ հաջողված օրինակներ համագործակցության շրջանակներում: Ծրագիրը պրոֆեսորադասախոսական անձնակազմին և ուսանողներին հնարավորություն է ընձեռում զարգացնելու շարժունության ռազմավարությունը և երկարաժամկետ համագործակցությունը: Այն հնարավորություն է տալիս համագործակցել նաև տեղական մակարդակներում, Բոլոնյան գործընթացի համատեքստում «Տեմպուս» ծրագիրն աջակցում է ՀՀ բուհերին՝ զարգացնելու վարչական կառուցվածքը, կրթական ծրագրերը, աջակցում է դասախոսների վերապատրաստումներին, ուսանողների շարժունությանը, շահառուների համագործակցությանը և այլն»:

Խոսելով «Էրազմուս+» ծրագրի մասին՝ ԵՄ հայաստանյան պատվիրակության ներկայացուցիչ Կառոլայն Շտայները նկատեց, որ այն ԵՄ ծրագիր է կրթության, վերապատրաստման, երիտասարդության և սպորտի հարցերով, որը կընթանա 2014-2020 թթ. ժամանակահատվածում: Կառոլայն Շտայներն իր խոսքում ընդգծեց՝ Եվրոպական միության համար կարևոր է Հայաստանում կրթական որակի բարելավումը:

Հայաստանում Էրազմուս+ ծրագրի ազգային գրասենյակի համակարգող Լանա Կառլովան խոսեց իրականացվելիք և սպասվող ծրագրերի մասին՝ ընդգծելով, որ այս տարի ՀՀ բուհերից երեքը հանդես են գալու որպես համակարգողներ: Նա ներկայացրեց բուհերին ընձեռված բոլոր հնարավորությունները՝ ծրագրերին մասնակցելու համար: «Ամեն մի ծրագիր մեծ մարտահրավեր է, իսկ դժվարություններն ավելի քիչ են լինում այն ժամանակ, երբ առկա է թիմային աշխատանք. այդ դեպքում ամեն ինչ հաղթահարելի է դառնում»,- ասաց Լանա Կառլովան:

ՀՊՄՀ-ի միջազգային համագործակցության բաժնի պետ, «Էրազմուս+» բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագետ Քրիստինա Ծատուրյանն էլ ընդգծեց, որ Մանկավարժական համալսարանը 2012 թվականից սկսած ակտիվ ներգրավված է նման ծրագրերում. «Էրազմուս+» ծրագրի շրջանակում ՀՊՄՀ-ի հարյուրից ավելի դասախոսներ մեկնել են վերապարաստման, միանշանակ այն շատ արդյունավետ է, հնարավորություն է տալիս ծանոթանալ եվրոպական փորձին, ինչպես նաև մեր փորձը ներկայացնել նրանց, փորձի փոխանակման արդյունքում էլ հասկանալ, թե ինչ է անհրաժեշտ մեր կրթական կարիքներին, վերցնելով առաջատար փորձն ու հաշվի առնելով ազգային կարիքներն՝ այդ ամենը համապատասխանեցնել մեր միջավայրին, որպեսզի մեզ համար այն ավելի բարենպաստ և օգտակար լինի»:

Զեկուցողները մասնակիցներին գործնական տեղեկատվություն տրամադրեցին «Էրազմուս+» ծրագրի բարձրագույն կրթության հատվածի ներքո հասանելի կրթաթոշակների և դրամաշնորհների վերաբերյալ, խորհուրդներ տվեցին ծրագրերի արդյունավետ կառավարման և իրականացման համար:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

Նոյեմբերի 14-ին նշվում է Լոգոպեդի միջազգային օրը: Մանկավարժական համալսարանի լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվեցին մի շարք միջոցառումներ: Անցկացված մասնագիտական աշխատաժողովի ընթացքում դասախոսները և ուսանողները խոսեցին լոգոպեդի մասնագիտության առաձնահատկությունների մասին, ներկայացրին բանաստեղծություններ՝ միտված արտաբերական վարժություններին, լոգո հեքիաթներ, նախագիծ, որն օգնում է ուսանողներին ստեղծել խոսքային նյութեր լոգոպեդական աշխատանքների համար, ինչպես նաև ներկայացվեց «Լոգոպեդական հետազոտության տեսագործնական մոտեցումները» ուսումնական ձեռնարկը: Օրվա շրջանակում տեղի ունեցավ լոգոպեդական, ձեռագործ խաղերի ցուցահանդես, ուսանողները խաղացին տրամաբանական խաղեր, ինչպես նաև քաղաքի կենտրոնական վայրերում անցորդներին բաժանեցին տեղեկատվական թերթիկներ:

Օրվա խորհրդով էլ որոշեցինք զրուցել ՀՊՄՀ-ում այս պահին աշխատող ամերիկացի լոգոպեդ, Կոնկորդիայի համալսարանի (Նեբրասկա) պրոֆեսոր Քևին Միլլերի հետ: Հարցազրույցի թարգմանության հարցում մեզ օգնեց դասախոս Մարիաննա Հարությունյանը:

Մեր օրերի լոգոպեդը պետք է լավ գիտելիքներ ունենա

- Դուք առաջի՞ն անգամ եք Հայաստանում և ի՞նչ առաքելությամբ:

- Այո: Այս տարվա օգոստոսի վերջին եկել եմ Հայաստան և կմնամ այստեղ մինչև դեկտեմբերի վերջը: Այստեղ եմ դրամաշնորհային ծրագրով գիտելիքների փոխանակում իրականացնելու, սովորեցնելու և լոգոպեդիայի ոլորտում հետազոտություններ իրականացնելու համար:

- Եթե արդեն հասցրել եք ծանոթանալ, ի՞նչ կասեիք Հայաստանում լոգոպեդական ինստիտուտի կայացման մակարդակի վերաբերյալ:

- Եթե անկեղծ՝ այստեղ գտնվելուս ընթացքում ընդամենը մեկ ներառական դպրոց եմ այցելելև կարճ զրույց ունեցել լոգոպեդի հետ: Բայց Մանկավարժական համալսարանի Հատուկ կրթության ֆակուլտետի լոգոպեդիայի վերականգնողական թերապիայի ամբիոնում հանդիպել եմ շատ մասնագետների, ովքեր լոգոպեդական մեծ փորձ ունեն:

- Ինչպիսի՞ն պետք է լինի ժամանակակից լոգոպեդը:

- Մեր օրերի լոգոպեդը ոլորտի մասին պետք է լավ գիտելիքներ ունենա, լսելու ընդունակություն, հաղորդակցվելու հզոր կարողություն, որպեսզի այդ ընթացքում հասկանա՝ ինչ է պետք դիմացինին:

Այսօր ես մասնակցեցի ձեր համալսարանի ուսանողների՝ լոգոպեդի օրվա առթիվ կազմակերպած միջոցառմանը: Ուսանողները ստեղծագործական մոտեցում էին ցուցաբերել, ինչը շատ կարևոր է լոգոպեդի համար:

- Ինչպե՞ս ընտրեցիք լոգոպեդի մասնագիտությունը:

- Մի ընկեր ունեի, ով մասնագիտացված էր լոգոպեդիայի և աուդիոլոգիայի մեջ: Նա իմ մեջ հետաքրքրություն առաջացրեց այդ մասնագիտության հանդեպ: Մենք երկուսս էլ սովորեցինք մագիստրատուրայում, ավարտեցինք, բայց ես շարունակեցի այս ուղղությամբ գործունեությունս, իսկ նա՝ ոչ:

Արդեն 35 տարի այս ոլորտում եմ և շնորհակալ եմ ԱՄՆ-ի Նեբրասկայի, Օհայոյի և Հյուսիսային Կոլորադոյի համալսարաններին, որտեղ ուսանել եմ:

- Նկատե՞լ եք ինչ առանձնահատկություններ կան մեր և ձեր երկրներում տարվող լոգոպեդական աշխատանքներում:

- Ես կարծում եմ այստեղ մասնագետների մեծ մասը աշխատում է դպրոցներում, նրանք մեծ դեր ունեն ներառական կրթությամբ հաստատություններում:

Ամերիկայի բնակչությունը մեծ է և բազմատարր: Մեզ մոտ լոգոպեդները բազմաբնույթ գործունեություն են ծավալում. լոգոպեդներն աշխատում են ոչ միայն դպրոցներում, այլև հիվանդանոցներում ու կլինիկաներում: Եվ պետք է ասեմ, որ Ամերիկայում լոգոպեդիան 100 տարվա պատմություն ունի, իսկ Հայաստանում այն կայացման շրջանում է:

- Հե՞շտ է արդյոք Ամերիկայի նման երկրում լոգոպեդ աշխատելը: Ի՞նչ որակական հատկանիշներ պետք է ունենալ լավ լոգոպեդ լինելու համար:

- Ես կարծում եմ լոգոպեդը, ինչպես նաև սուրդոմանկավարժը ծառայում է հասարակությանը: Իմ փորձից կարող եմ ասել, որ լավ լոգոպեդը պետք է ունենա մարդկանց հետ շփվելու կարողություններ, կարողանա վաստակել նրանց վստահությունը, նոր միայն նրանց հետ լիարժեք կարողանա աշխատել:

Եթե դու ուզում ես Ամերիկայում լոգոպեդ աշխատել՝ պետք է կարողանաս աշխատել հասարակության տարբեր շերտերի հետ՝ հատուկ կարիքներով մարդկանց, նրանց ծնողների և ուրիշների հետ:

Ամերիկյան համալսարանում ես ուսանողների հետ խոսում եմ լոգոպեդիայի, ներառական կրթության և Հայաստանում ներառական կրթության ուղղությամբ տարվող աշխատանքների մասին:

- Որևէ առանձնահատուկ դեպք հիշո՞ւմ եք ձեր աշխատանքային պրակտիկայից:

- Այո, Նոր Մեքսիկայում մենք աշխատում էինք չլսող (խուլերի) երեխաների դպրոցում, որտեղ սովորում էին տարբեր ազգությունների և հավատալիքների ներկայացուցիչներ: Մենք աշխատում էինք մի հնդիկի հետ, որը լսողության խնդիրներ ուներ, հայրը չէր լսում, մայրն էլ չգիտեինք ինչ լեզվով է խոսում: Մենք խոսում էինք անգլերեն, ժեստերի լեզվով և այլն: Դա մաձույլ ազգերի գործարան էր հիշեցնում…

- Ի՞նչ տպավորություններ եք ստանում Մանկավարժական համալսարանի ուսանողների հետ աշխատելիս: Եվ ի՞նչ կուզեիք ասել մեր թերթի միջոցով:

- Ձեր համալսարանի ուսանողներն ունեն լսելու, ունկնդրելու և հաղորդակցվելու կարողություններ: Նրանք խելացի հարցեր են տալիս: Ես աշխատում եմ 4-րդ կուրսի ուսանողների հետ, և կարծում եմ նրանք ունեն բավականին խոր գիտելիքներ, ինչը ինձ համար առանցքային է:

Տպավորված եմ համալսարանի դասախոսների և ուսանողների աշխատանքով: Ես գիտեմ, որ Հայաստանը չունի այն հնարավորությունները, որն ունի Ամերիկան, բայց այստեղ կան մի քանի ուսանողներ, որոնց կարելի է համեմատել ամերիկյան համալսարանների լավագույն ուսանողների հետ: Ես կարծում եմ, որ նրանք հետագայում արդյունավետ աշխատանքներ կիրականացնեն իրենց համալսարանում:

Զրույցը՝
Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

Քննարկվեցին Լև Վիգոտսկու աշխատությունները

Մանկավարժական համալսարանում անցկացվեց «Պատմամշակութային մեթոդոլոգիան Վիգոտսկու աշխատություններում և զարգացնող կրթության հոգեբանական և մանկավարժական ասպեկտները» թեմայով կլոր սեղան՝ նվիրված հոգեբան, պատմամշակութային տեսության հիմնադիր Լև Վիգոտսկու ծննդյան 120-ամյակին:

Մինչ աշխատանքների մեկնարկը Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի պատվիրակներին ընդունեց բուհի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը: Անդրադառնալով բուհի շուրջ 60 մասնագիտություններին և ժամանակակից տեխնիկայով հագեցած լաբորատորիաներին՝ ռեկտորն ընդգծեց, որ համալսարանի առաջնային նպատակներից մեկն էլ բուհը հետազոտական դարձնելն է: Ռեկտորը գործընկերներին ներկայացրեց բուհի վերջին տարիների ձեռքբերումները՝ կարևորելով երկու տարի առաջ ներդրված «Google classroom» ծրագիրը և պրակտիկայի կազմակերպման նոր բարեփոխումները:

Հյուրերը փոխանցեցին «Ամառային դպրոց 2016»-ի ռուս ուսանողների հիացմունքն ու գոհունակությունը, ապա հավելեցին, որ տարբեր ձևաչափերում կազմակերպված ձեռնարկներով փորձում են ամրապնդել և շարունակել երկու բուհերի միջև համագործակցությունը:

«Պատմամշակութային մեթոդոլոգիան Վիգոտսկու աշխատություններում և զարգացնող կրթության հոգեբանական և մանկավարժական ասպեկտները» թեմայով կլոր սեղան-քննարկման աշխատանքներին մասնակցում էին մանկավարժական, հոգեբանական և լեզվաբանական ուղղություններով բարձրագույն կրթության կազմակերպիչներ, ինչպես նաև գիտական և կրթական այլ ոլորտների ներկայացուցիչներ: Կլոր սեղան-քննարկման հիմնական նպատակն էր ընդհանրացնել Վիգոտսկու համաշխարհային գիտական փորձն ու մեթոդոլոգիան, ամրագրել նրա տեսությունը հոգեբանամանկավարժական պրակտիկայում, ինչպես նաև զարգացնել երկու երկրների միջև համագործակցությունը:

Աշխատանքների մեկնարկը ողջունեց ՀՊՄՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը: Պրոֆեսորը նկատեց, որ հայկական հոգեբանական միտքը կրում է նաև Վիգոտսկու գաղափարների ազդեցությունը:

Կլոր սեղանի շուրջ բանախոսներն անդրադարձան Վիգոտսկու փորձարական մանկավարժության, արտալսարանային աշխատանքների կազմակերպման գաղափարներին:

«Դպրոցը ոչ միայն պետք է լինի որոշակի ֆորմալ տարածք կրթության համար, այլ այդ կրթությունը պետք է հանվի դպրոցի տարածքից դուրս, օգտագործվի տարբեր սոցիալական կենտրոններում, որտեղ երեխան էլ ավելի հաճույքով և ազատ, որպես փոխգործակցող սուբյեկտ, կարող է իրականացնել կրթության նպատակները»,- ասաց Սրբուհի Գևորգյանը և հավելեց, որ ցավոք Վիգոտսկին դեռևս լիովին ընթերցված չէ:

Երկօրյա կլոր սեղան-քննարկումը կազմակերպել էին Հայաստանում «Ռոսսոտրուդնիչեստվո» դաշնային կազմակերպությունը, Մոսկվայի մանկավարժական պետական համալսարանը, Երևանում Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնը, ինչպես նաև Հայ-ռուսական (սլավոնական) և Մանկավարժական համալսարանները:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

Ժողովրդավարական արժեքները՝ կրթության միջոցով

«Մեր համայնքը՝ բանավիճիր և բանակցիր հանուն շահերի ու փոխզիջումների» խորագրով մոդելավորում-խաղերն ու դասընթացները երեք օր հետաքրքիր լարվածության մեջ պահեցին Մանկավարժական համալսարանի ուսանողներին ու դասախոսներին: Նախաձեռնության հեղինակն էր Գերմանական Դաշնության «CIVIC» Միջազգային կրթության ինստիտուտը Հայաստանում Արտաքին մշակութային հարաբերությունների ինստիտուտի հետ համագործակցությամբ (IFA):

Սեմինարի անցկացման երկրորդ օրը Հայաստանում Գերմանիայի դեսպան Մաթիաս Քիսլերը այցելեց համալսարան: Նա ծանոթացավ մասնակիցների հետ անցկացվող դասավանդման նոր մեթոդների ուսուցման ձևաչափին՝ վստահ, որ այն նպատակային կիրառություն կունենա:

Քաղաքացիական հասարակության կայացման ու զարգացման գործում ներկա սեմինարի կարևորությունն ընդգծեց ՀՊՄՀ Պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանը:

Ուսանողների հետ աշխատում էին Գերմանիայից եկած փորձագետներ Հոլգեր-Միքայել Արնդտը և Անի Օհանյանը:

Հայազգի Անի Օհանյանը, ով բնակվում է Գերմանիայի Բեռլին քաղաքում և աշխատում «CIVIC» Միջազգային կրթության ինստիտուտում, ներկայացրեց իրենց կողմից կրթության ոլորտում տարբեր ծրագրերի իրականացման նպատակներն ու ուղղությունները: «Մենք փորձում ենք Արևելյան Եվրոպայում ժողովրդավարության արժեքները ներկայացնել կրթության միջոցով: Սովորողներին և դասախոսներին ցույց ենք տալիս որ նոր, ինտերակտիվ մեթոդներով ցանկացած նյութ առավել դյուրին է ընկալել»:

Սեմինարի ընթացքում կազմակերպված խաղին մասնակցում էր Պատմության և իրավագիտության ֆակուլտետի 25 ուսանող: Հայազգի փորձագետը հավատացած է՝ թրեյնինգը հետաքրքիր և մատչելի է ուսանողների համար, այն ժողովրդավարության ու կրթության փոխկապերի ուսուցման ժամանակակից ձևերի մատուցումն է:

Սեմինարի երկրորդ օրը մասնակիցները ձևականորեն դարձել էին երևակայական մի քաղաքի քաղաքական գործիչներ: Քաղաքապետարանում նրանք պետք է կոալիցիաների միջոցով ընտրեին նոր քաղաքապետ և ապա քաղաքի մի ազատ տարածքում որոշեին ինչ կառուցել: Մասնակիցներն իրենց առջև դրված առաջադրանքի կատարման համար պետք է կիրառեին ժողովրդավարական մեթոդներ: Թրեյնինգի ղեկավարները մասնակիցների հետ խոսեցին, թե ինչն է կարևոր ժողովրդավարության մեջ և դրան հասնելու ինչ մեխանիզմներ կան:

«Սեմինարի նպատակն էր տարբեր նորարարական մեթոդներ ուսուցումը և գործնական կիրառումը»,-ասում է ապագա պատմաբան Սաթիկ Ղուկասյանը:- Սեմինարները տևեցին երկու օր: Դրական էր նաև այն, որ ուսանողները հիմնականում միմյանց հետ հաղորդակցվում էին անգլերեն լեզվով: Որպես արդյունք կարելի է նշել, որ մասնակից ուսանողներով սովորեցինք մի քանի նոր խմբակային մեթոդներ և տեսանք դրանց արդյունքները, նաև սովորեցինք հաղորդակցման հմտություններ: Իհարկե որոշ խաղ-մեթոդներ մեզ արդեն ծանոթ էին. դրանք մենք արդեն կիրառում էինք մեր դասապրոցեսում, այնուամենայնիվ, պետք է փաստել, որ սեմինարը ժամանակի վատնում չէր, ձեռքբերումները շատ էին»:

Նոյեմբերի 9-ին սեմինարին մասնակցեցին նաև համալսարանի դասախոսները: Նրանք ծանոթացան անցկացված խաղին ուսանողների մասնակցության արդյունքներին և փորձագետների օգնությամբ անձամբ ծանոթացան դասավանդման և ուսուցման ինտերակտիվ մեթոդներին:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՀՊՄՀ-ի Համալսարան-գործատու համագործակցության կենտրոնն ու ՄԱԿ-ի հանրային տեղեկատվության վարչությունը համատեղ կազմակերպել էին ՄԱԿ-ի 2030 թվականի զարգացման օրակարգին նվիրված ֆորում՝ «Կրթություն հանուն կայուն զարգացման» համաշխարհային գործընթացը և Հայաստանը» թեմայի շուրջ: Ֆորումի մասնակիցներին ողջունեց ՀՊՄՀ պրոռեկտոր Արա

Եթե չվերահսկենք մեր գործունեությունը...

Երեմյանը, ով կրթությունը յուրաքանչյուր պետության ռազմավարական կարևորագույն խնդիր համարեց. «Կրթությամբ է պայմանավորված բոլոր պետությունների հզորությունն ու ներուժը և այն ամենն, ինչով կարող է պետությունը ներկայանալ միջազգային շուկայում»,- ասաց Արա Երեմյանը:

«Համալսարան-գործատու համագործակցության կենտրոն»-ի ղեկավար Ռիտա Գևորգյանը կարևորեց ֆորումը և հույս հայտնեց, որ նման ձեռնարկները կլինեն շարունակական, տեղեկատվություն կփոխանցվի ուսանողներին և իրենք էլ կաշխատեն իրենց ներդրումն ունենալ այդ զարգացման գործընթացում:

«Կայուն զարգացման համաշխարհային գործընթացը և փոխակապկցված նպատակները» թեմայի շուրջ խոսեց ՀՊՄՀ էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Կարինե Դանիելյանը: Էկոլոգը նկատեց՝ գիտությունն ապացուցում է, որ մեր մոլորակում գնալով տեղի է ունենում ապակայունացում. շատացել են աղետները, երաշտները, ջրհեղեղները, հողերի դեգրադացումը, կլիմայի փոփոխությունը, որոնք էլ լուրջ անհանգստության առիթ են տալիս:

«Ավելի խոցելի են այն երկրները, որոնք տնտեսապես զարգացած չեն և ի վիճակի չեն պայքարել և դիմակայել այդ փոփոխություններին: Երկիր մոլորակը վանում է մարդկությանը, այն մեզ հեռացնում է իրենից: Մարդկությունը հակադրվել է բնությանը, եթե վերահսկողության չենթարկենք մեր գործունեությունը, հիմնովին չփոփոխենք մեր արդի կուրսը, աշխարհը կփոխվի այնպես, որ այլևս չի կարողանա պահպանել բնականոն կյանքը»,- ասաց Կարինե Դանիելյանը: Նա այդ ամենի մասին մտածելու ժամանակ համարեց ընդամենը 10-20 տարի և անհրաժեշտ համարեց, որ մարդ-բանականը վերափոխվի մարդ բանականի և բարոյականի:

Կարինե Դանիելյանը նկատեց. «Էկոլոգիայի մասին խոսվել է դեռևս Աստվածաշնչում. Աստվածը մեր հայրն է, մոլորակը՝ մեր մայրը, պետք է ենթարկվենք նրա կանոններին»:

ՀՀ-ում կայուն զարգացման կրթության մոդելի գործարկմանն անդրադարձավ ԵՊԼՀ կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի վարիչ, Որակի ապահովման կենտրոնի ղեկավար Ռոբերտ Խաչատրյանը, իսկ ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Կրթություն հանուն կայուն զարգացման» ամբիոնի վարիչ Գայանե Պողոսյանը՝ միջազգային գործընթացներից՝ ներկայացնելով մեր երկրի ձեռքբերումները:

Ֆորումն ամփոփվեց քննարկումներով և հարց ու պատասխաններով:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

Մասնակցեցին հանրապետական գիտաժողովի

Վանաձորի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերության կազմակերպած ուսանողական հանրապետական գիտաժողովը՝ նվիրված Հայաստանի Հանրապետության վերանկախության 25-ամյակին: Գիտաժողովին Ա. Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Արմենուհի Մխիթարյանի գլխավորությամբ մասնակցում էին նաև ՀՊՄՀ-ի Սկզբնական կրթության ֆակուլտետի մագիստրոսներ Ռուզաննա Ղուկասյանը (ղեկավար մ.գ.դ., պրոֆեսոր Զուլիետա Գյուլամիրյան), Արփի Պողոսյանը (ղեկավար կենս. գիտ. թեկ., դոցենտ, պրոֆեսորի պ/կ Սպարտակ Փալիկյան), ինչպես նաև 4-րդ կուրսի ուսանողներ Արմինե Խրոյանը (ղեկավար բ.գ.թ., դոցոնտ Արմենուհի Մխիթարյան), Անահիտ Կիրակոսյանը (ղեկավար բ.գ.թ., դոցենտ Արմենուհի Մխիթարյան) և Անահիտ Հովակիմյանը (ղեկավար մ.գ.թ. Աստղիկ Բալայան):

Լիագումար նիստի սկզբում գիտական նստաշրջանի մասնակիցներին ողջույնի խոսք հղեց Վանաձորի պետական համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Գուրգեն Խաչատրյանը՝ նշելով, որ նստաշրջանին մասնակացում են Հայաստանի և Արցախի շուրջ 10 բուհերի 100 ուսանողներ: Նա ողջունեց այլ համալսարանների համագործակցությունը ՎՊՀ-ի հետ՝ հույս հայտնելով, որ հաջորդ նստաշրջանի ընթացքում այլ բուհերի մասնակիցների թիվը կկրկնապատկվի:

Լիագումար նիստից հետո գիտաժողովի մասնակիցները շարունակեցին իրենց աշխատանքները տարբեր բաժանմունքներում: Իրենց ելույթներում ՀՊՄՀ-ի ուսանողներն անդրադարձան տարրական դպրոցում ուսուցողական քվեստի կիրառմանը, հեքիաթաթերապիային և դրա կարևորությանը տարրական դպրոցում, աուտիկ երեխաների հոգեբանամանկավարժական աջակցությանը ներառական կրթություն իրականացնող հաստատություններում, էդուարդ դե Բոնոյի «Մտածողության վեց գլխարկներ» մեթոդական հնարին և Առցանց TV-ին՝ որպես ուսուցման գործիքի, որոնք մեծ հետաքրքրություն առաջացրին գիտական նստաշրջանի մասնակիցների շրջանակներում:

Մասնակիցներին հանդիսավորությամբ հանձնվեցին հավաստագրեր, որից հետո կազմակերպվեց էքսկուրսիա Ստեփան Զորյանի տուն-թանգարան:

դասախոս, ճանաչված և սիրված անուն հայկական Սփյուռքում:

«Համաշխարհային կրթության առաջատար համալսարանի դասախոսն այսօրվա իր բանահյուսության նյութը տեղեկատվական սեմինար է անվանել: Նա երկխոսության հաստատման իր ճանապարհն է ընտրում լսարանում»,- ասաց Ս. Դանիելյանը՝ հավելելով, որ նրա անմիջական նախաձեռնությամբ Օքսֆորդի համալսարանում անց է կացվել արևմտահայերեն լեզվին նվիրված գիտաժողով:

Բանախոսության թեման արևմտահայերենի ճակատագիրն է 21-րդ դարում: Պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը հռետորական հարց է ուղղում լսարանին. «Արդյո՞ք մենք Հայաստանում կարողանում ենք հավուր պատշաճի արևմտահայ գրողներ, հրատարակիչներ և մամուլի ներկայացուցիչներ տարբեր երկրներից, քանզի «լեզվի կենսունակությունը կպահանջե ստեղծագործական կյանք»:

«Մենք չպետք է խոսենք մեր լեզուն ու մշակույթը պահպանելու մասին, այլ ապրենք այդ լեզվով ու մշակույթով: Այդ դեպքում միայն լեզուն կենսունակ կմնա», -փաստում է Հ. Չիլինկիրյանը:

Դասախոսը մտահոգված է. պետք է ունենալ արևմտահայ գրողների լայն զանգված և հարթակ, որ զարգացնի գրողների այդ զանգվածը, սփյուռքի մեջ չկան հայալեզու համալսարաններ, հետևաբար և հայեցի կրթություն չկա, այն տարբեր օտար լեզուներով է, արևմտահայ ուսուցումը բացակայում է և խնդիրը մնում մտավորականների

«Մենք չպետք է խոսենք մեր լեզուն ու մշակույթը պահպանելու մասին, այլ ապրենք այդ լեզվով ու մշակույթով»

Բանասիրական ֆակուլտետի ուսանողների հյուրերը նոյեմբերի 15-ին քաղաքագետ, գրականագետ, խմբագիր Հրաչ Չիլինկիրյանն էր, ով դասավանդում է Օքսֆորդի համալսարանում, և Գաբրիել Սուլթանյանը Մանչեսթրից:

Պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը ներկայացրեց սփյուռքահայ հյուրին՝ Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր, սոցիոլոգիայի գծով դոկտոր, աստվածաբան, արևելագիտության բաժանմունքի տեր կանգնել արևմտահայերենին, որը պետական ծրագրերում առայժմ կարծես թե առաջնային դեր չի գրավում»:

Համալսարանի արևելագիտության ամբիոնի գիտաշխատող, դասախոս Հ. Չիլինկիրյանը ներկայացրեց անցկացված գիտաժողովի նպատակը, խնդիրներն ու արդյունքները. ինչպես անել, որ արևմտահայ լեզուն ու մշակույթը մատուցվեն նոր տեխնոլոգիաների միջոցով: Աշխատաժողովին հրավիրվել են վրա:

Սփյուռքի և արևմտահայ լեզվի մասին իր մտահոգությունները ուսանողների հետ կիսելուց հետո Հրաչ Չիլինկիրյանը պատմում է Օքսֆորդի համալսարանի 800-ամյա ձեռքբերումների, 38 քոլեջների, համալսարանի կառուցվածքային առանձնահատկությունների և հայագիտական գործունեության մասին:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՍՈՎՈՐԵԼՆ Է ԼԱՎ ԱՊԱԳԱՅԻ ԽՈՍՏՈՒՄՆԱԼԻՑ ՍԿԻԶԲԸ

Հարցազրույց համալսարանի Բանասիրական ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ **Էդգար Ապրեսյանի** հետ

- Ո՞վ է 21-րդ դարի ուսանողը:

-21-րդ դարի ուսանողը կրթված և զարգացած անձ է, ով կարողանում է բուհից ստանալ իրեն անհրաժեշտ գիտելիքները, ինչպես նաև սովորում է կառուցել ուսանող-դասախոս, ուսանող-ուսանող ճիշտ հարաբերությունները: Ուսանողի ամենամեծ նպատակը գիտելիքների հզոր պաշար հավաքելն է, որը հնարավոր է միայն կամքի, աշխատասիրության և նպատակասլացության միջոցով: Այսօրվա ուսանողն ունի վառ պատկերացում ապագայի մասին, որի շնորհիվ փորձում է իր ներկան ճիշտ կերտել:

- Ի՞նչ առօրյայով է ապրում բանասիրական ֆակուլտետի ուսանողը:

- Բանասիրական ֆակուլտետի ուսանողի առօրյան հագեցած է: Ուսանողական խորհուրդը կազմակերպում է տարաբնույթ միջոցառումներ՝ բանավեճեր, ինտելեկտուալ, սպորտային խաղեր, բնապահպանական սեմինարներ և գիտական հանրամատչելի միջոցառումներ, որոնք բանասերների առօրյան դարձնում են ավելի հետաքրքիր:

- Ի՞նչ գործառույթներ ունի Ուսանողական խորհուրդը:

- Ուսումնառության տարիների ընթացքում Ուսանողական խորհուրդը միշտ լինում է ուսանողների կողքին և պաշտպանում նրանց իրավունքները: Մենք հավատարիմ ենք մնում մեր առաքելությանը և ամուր կապը միշտ պահպանում ենք: Նպաստում ենք ուսանողների հասարակական, գիտական, ինտելեկտուալ, ստեղծագործական, մշակութային, բարոյական և հոգևոր զարգացմանը: Մշտապես կարևորում ենք ուսանողների մարդկային, կազմակերպչական և ստեղծագործական ձիրքերը, որոնք օգտագործում ենք ի նպաստ հենց իրենց::

- Ուսուցման նոր ձևերի ներդրումն ինչպե՞ս է օգնում ուսումնական գործընթացին:

- 21-րդ դարում կրթություն ստացող ուսանողը պետք է քայլի նոր տեխնոլոգիաներին զուգընթաց: Այսօր մանկավարժական համալսարանը կատարել է մեծ քայլ՝ ներդնելով ուսուցման մեջ Google classroom-ի ծրագիրը: Այդ ծրագիրը լարում է ուսանողների հիշողությունը և զարգացնում հոգեկան գործընթացները: Google classroom-ի շնորհիվ ուսանողի կարծիքը դառնում է առաջնային, որը խթանում է մտքի զարգացմանը: Ժամանակը ավելին է, քան նախկինում, որը թույլ է տալիս դասախոսին ինտերակտիվ դաս անցկացնել:

- Ուսանողակենտրոն ուսուցման պայմաններում ի՞նչ ծրագրեր են իրականացվում:

- Ֆակուլտետում իրականացվում են զանազան ծրագրեր, որպեսզի ուսանողները լինեն ավելի կրթված ու զարգացած և ունենան լայն մտահորիզոն:

Ֆակուլտետը կազմակերպում է գրքահավաքներ, որոնք նվիրաբերվում են Հայաստանի և Արցախի զորամասերին: Ստեղծվելու է ֆակուլտետի տաղանդավոր ուսանողների խումբ, որտեղ կլինեն երգիչներ, ասմունքողներ: Այսպիսի ծրագրերը թույլ են տալիս ուսանողներին դարձնել բազմագործառույթ:

Դասերի ավարտից հետո թույլ ուսանողների հետ կատարվում են լրացուցիչ աշխատանքներ, որպեսզի ուսանողն իր ուսումնառության մեջ չունենա բացթողումներ: Կուրսղեկներն ամենօրյա աշխատանքներ են կատարում իրենց կցված կուրսերի հետ. ամենօրյա դասերից զատ կազմակերպվում են այցեր պատմամշակութային օջախներ, որոնք ուսուցումը դարձնում են առավել դյուրին ու հագեցած:

- Ձեզ ինչպիսի՞ ուսանող եք համարում:

- Ես սովորում եմ բանասիրական ֆակուլտետի մագիստրատուրայի առաջին կուրսում: Սիրում եմ իմ մասնագիտությունը, քանի որ մանկավարժի մասնագիտությունը վեհ կոչում է: Այսօր, ցավոք, դպրոցում կան քիչ տղամարդ ուսուցիչներ, և դա ունի իր պատճառները: Բայց այսօր ֆակուլտետում կրթություն են ստանում տղաներ, որոնք հետագայում դպրոցներում տղամարդ ուսուցչի բացը կլրացնեն:

Ինձ համարում եմ հասարակական մեծ ակտիվություն ցուցաբերող ուսանող, որովհետև առաջին կուրսից ուսանողական խորհրդի անդամ եմ մինչև այսօր:

- Ի՞նչ կմաղթեք այսօրվա ուսանողին:

- Այսօրվա ուսանողը պետք է գիտակցի, որ ապագան իրենով է պայմանավորված: Ուսանողներին կցանկանամ, որ ուսումնառության տարիներին միշտ լինեն առաջինը և իրենց գիտելիքների պաշարը ավելացնեն, քանի որ սովորելն է լավ ապագայի խոստումնալից սկիզբը: Երբեք չվհատվեն փոքրիկ խնդիրներից, քանի որ հենց դրանց միջոցով դառնում ես ավելի ուժեղ: Կմաղթեմ ուսանողներին բարձր առաջադիմություն ուսման մեջ և բազում հաջողություններ կյանքի բոլոր փուլերում:

Լուսավոր ու տեսանելի ապագա

Մանկավարժական համալսարանում գործում են ուսանողական տարբեր երաժշտախմբեր, որոնցից մեկն էլ Յուրի Ավետիսյանի գեղարվեստական ղեկավարությամբ ջութակահարների անսամբլն է: Բազմիցս ունկնդրել ենք խմբի կատարումները և հիացել ուսանողների կատարողական մակարդակով: Պետք է փաստել, որ երաժշտախմբերում ընդգրկվածությունը և համերգային ծրագրերով տարբեր միջոցառումների ընթացքում հանդես գալը միաժամանակ ոգևորում է ուսանողներին, բարձրացնում ուսումնական գործընթացի հանդեպ հետաքրքրվածությունը և նոր լիցքեր հաղորդում:

Խումբը որոշեց համերգային ծրագրով հանդես գալ «Նարեկացի» արվեստի միությունում՝ այս ձևով հարգանքի տուրք մատուցելով կրթության ոլորտի նվիրյալներին, միաժամանակ ներկայացնելու համալսարանի մասնագիտությունները:

«Մանկավարժությունը որպես ապագայի մասնագիտություն» խորագրով համերգային ծրագրին հրավիրվել էին դպրոցականներ, մշակույթի և կրթության ոլորտի մասնագետներ, համալսարանի ուսանողներ և դասախոսներ:

Նախաձեռնության հեղինակը Ժաննա Խաչատրյանն էր, ով վերոհիշյալ ձեռնարկով ընդգծեց Մանկավարժական համալսարանի մեծ դերակատարությունը մանկավարժների պատրաստման գործում՝ ներկայացնելով ուսանող երաժիշտներին:

Ելույթները համեմվեցին Յ. Բրամսի, Կոմիտասի, Մ. Թարիվերդևի, Ֆ. Շոպենի, Գ.Սվիրիդովի, Արամ Խաչատրյանի, Ա. Վիվալդիի, Էդուարդ Դանիելյանի, Էդուարդ Բաղդասարյանի ստեղծագործությունների հիանալի մատուցմամբ, որը ներկայացրին համալսարանի ջութակահարների անսամբլը և մենակատարները:

Ուսանողների աշխատանքը ներկայանալի ու բարձր գնահատեցին դասախոսները՝ պրոֆեսոր Յուրի Յուզբաշյանը և մյուս մասնագետները, ովքեր կարևորեցին ապագա ջութակահարների կայացման այսպիսի ճանապարհը Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական համալսարանում: Նրանք փաստեցին, որ մշակութային միջավայրում դաստիարակվող և ուսուցանվող երիտասարդների ապագան լուսավոր է ու տեսանելի:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

Ֆիզիկայի դպրոցական դասընթացի ուսուցման մեթոդիկայի մասնավոր հարցեր. Երևան, 2016

ՀՊՄՀ դասախոսներ Գարուշ Պետրոսյանի, Պետրոս Պետրոսյանի և Նաիրա Սաֆարյանի հեղինակությամբ լույս է տեսել «Ֆիզիկայի դպրոցական դասընթացի ուսուցման մեթոդիկայի մասնավոր հարցեր» ուսումնական ձեռնարկը:

Գրքում շարադրված են ֆիզիկայի դպրոցական դասընթացի մասնավոր հարցերը, լուսաբանված են «Մեխանիկա», «Մոլեկուլյար ֆիզիկա և ջերմադինամիկա» բաժինները և «Էլեկտրադինամիկայի ընդհանուր հարցերը»:

Ձեռնարկը նախատեսված է մանկավարժական բուհերի ուսանողների համար, այն կարող է օգտակար լինել նաև ֆիզիկայի ուսուցիչներին:

ՀՈԲԵԼՅԱՐԻ ՈՉ ՍՈՎՈՐԱԿԱՆ ՄԵԿ ՕՐԸ

Լրացավ ՀՊՄՀ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի մաթեմատիկայի և նրա դասավանդման ամբիոնի դասախոս, մաթեմատիկոս Սևադա Խաչատրյանի ծննդյան 70-ամյակը: Գործընկերները անակնկալ էին մատուցել հոբելյարին. մի սովորական լսարանում հավաքվել էին և սրտի խոսք էին ասում, հիշողություններով գնում դեպի անցյալ, քրքրում հուշերը և գեղեցիկ ու ջերմ պատառիկներ ներկայացնում:

Մարդուն իր կենդանության օրոք արժևորելը թերևս արժեքներից ամենաբարոյականն է: Գիտությամբ զբաղվող մարդկանց աշխարհն այլ է. նրանք ապրում են իրենց ստեղծած աշխարհում ու կարծեք թե գնահատման խնդիր չունեն: Բոլոր դեպքերում հաճելի է լսել այն մարդկանց կարծիքն ու գնահատականները, ում հետ կյանքի ճանապարհ ես անցել՝ աշխատանքային գործունեության հետագիծ թողել...

Մանկավարժական համալսարանում գեղեցիկ ավանդույթ կա. որոշակի տարիք ունեցող հոբելյարին գիտական խորհրդի նիստում շնորհավորում է անձամբ ռեկտորը և խորհրդի անդամների անունից շնորհավորական ուղերձի հետ նվիրում խորհրդանշական գումար: Ու դա մարդուն գնահատելու ձևերից մեկն է, անպայման շատ կարևոր, դրական երևույթ՝ մարդուն նկատելու, նրա մասնագիտական ու մարդկային որակները ներկայացնելու պատեհ առիթ:

Եվ ահա դասախոսի ընկերները անպաճույճ, անկաղապար արտահայտություններով փորձում էին բնութագրել իրենց ընկերոջը, գործընկերոջը, իսկ օրվա «մեղավորը» մաթեմատիկական գիտությունների դոկտոր Համլետ Միքայելյանն էր, ով բոլորին հրավիրել էր՝ հոբելյարի մեկ օրը միասին նշելու և ոչ սովորական դարձնելու համար:

Լսարանում ամպագոռգոռ բառեր չհնչեցին. ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լևոն Արաբաջյանն ասաց, որ Սևադա Խաչատրյանն ապրում է իր աշխատանքով, նվիրված է գիտությանը, կյանքի ու անգամ խնդիրների լուծման հանդեպ ունի ոչ ստանդարտ մոտեցումներ, ուղղախոս է, լավ ընկեր, անսահման նվիրված է իր ընտանիքին:

ԿԱԻ-ի փոխտնօրեն Յուրա Սաֆարյանը երկար տարիներ Գորիսում աշխատել է Ս. Խաչատրյանի հետ: «Նա հոգի էր դնում աշխատանքի մեջ»-ասում է Յու. Սաֆարյանը՝ հպարտ, որ նման մարդու հետ շփվելու հնարավորություն է ունեցել:

Ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ Վարազդատ Վարդազարյանը հոբելյարի մասին խոսելիս ընդգծեց մի հանգամանք. նրա բոլոր քայլերը համակարգված են, ինքն էլ միշտ երիտասարդ է, տարիքը չի երևում, թերևս մարդու գործունեությունը կախված է ոչ թե տարիքից, այլ էությունից...

Սևադայի հետ անցկացրած ուսանողական տարիների մասին խոսեց ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գուրգեն Ղուլղազարյանը, իսկ մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Ալեքանդր Ղուշչյանը համատեղ երկար աշխատանքային տարիների հեռվից խոսեց գործընկերոջ մարդկային ու սրտացավ վերաբերմունքի մասին դեպի ընկերներն ու ուսանողները: Չմոռացավ նաև խստապահանջության մասին, որը հոգուտ ուսանողի է:

Հոբելյարի մասին իր սրտի խոսքն ասաց մաթեմատիկական գիտությունների թեկնածու, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ամբիոնի վարիչի պաշտոնակատար, Համլետ Միքայելյանը: Ապա բոլորը նրան մաղթեցին երկար կյանք ու գիտամանկավարժական բեղուն գործունեություն:

Սևադա Խաչատրյանը 1969 թվականից աշխատել է նախկինում ՀՊՄՀ-ի մասնաճյուղումում՝ Գորիսի մանկավարժական համալսարանում: Երեք տարի եղել է Գորիսի հատուկ գիշերօթիկ դպրոցի տնօրենը: Մինչև այսօր դասավանդում է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում: Գիտամանկավարժական գործունեությունը նրա կյանքի ու կենսագրության ամենակարևոր մասն է: Վերջերս էլ Դոնեցկում մասնակցել է մաթեմատիկայի հիմնախնդիրներին նվիրված միջազգային կոնֆերանսի:

Ծնվել է Անիի շրջանի Սառնաղբյուր գյուղում 1946-ի հոկտեմբերի 23-ին: Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի շրջանավարտն ավարտել է բուհի ասպիրանտուրան դիֆերենցիալ հավասարումների գծով, մասնագիտության հանդեպ սերը ժառանգել է ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցիչ հորից:

Զրույցի ընթացքում ինքս էլ գաղտնազերծում եմ որոշ բաներ, որ բնորոշ են հոբելյարին. նա չի սիրում կեղծիքը, սուտն ու քծնանքը, եթե նորից ծնվեր՝ էլի կընտրեր նույն մասնագիտությունը, բնավորությամբ հանդուրժող է, հարմարվող, սիրում է ուսանողներին և հղում իր խոսքը. «Պետությունը հզոր է այնքանով, որքանով պետության մեջ զարգացած են հիմնարար գիտությունները՝ ֆիզիկան, մաթեմատիկան, ինֆորմատիկան: Ունի լավ ընտանիք, 2 տղա և 3 թոռ: Կինը ուսուցչուհի է: Հայաստանի ապագան ուզում է տեսնել հարևան երկրների հետ բարիդրացիական հարաբերություններով և լավատես է, որովհետև առանց լավատեսության դժվար է ապրել»:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Բանաստեղծի գունագեղ աշխարհում

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը և Վ. Թոթովենցի անվան հմ. 57 հիմնական դպրոցը թվականի հոկտեմբերի 28-ին կազմակերպել էին հանդիպում անվանի բանաստեղծ, մանկագիր, երգիծաբան Սուրեն Մուրադյանի հետ: Հանդիսությունը վարում էին բանասիրական ֆակուլտետի ուսանողներ Աննա Սարգսյանը (մագիստրատուրայի առաջին կուրս) և Անի Ղալաչյանը (բակալավրիատի երկրորդ կուրս):

Բացման խոսքով հանդես եկավ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը: Նա նշեց, որ այսօր արդեն դժվար է հաշվել բանաստեղծի գրքերի ճշգրիտ թիվը: Ինքը գրողն էլ անկեղծորեն կարող է շփոթվել, քանի որ գիրք գրքի վրա ավելանում է մեր գրական գանձանակը, ավելի ճիշտ կլինի նշել նրա հարուստ ու գունագեղ ժանրերը: Սուրեն Մուրադյանն այն հազվագյուտ բանաստեղծներից է, ով ուղեկցում է հայ ընթերցողին մանկուց մինչև ծերության նախաշեմը: Իսկ սա արդեն բարձր գնահատական է:

Ապա ձայնը տրվեց փոքրիկներին, ովքեր համառոտ ներկայացրին Սուրեն Մուրադյանի կենսագրական գծերը, արտասանեցին մանկական բանաստեղծություններից և կատարեցին նրա տեքստերով երգեր:

Հայրենասիրական, սիրային, խոհափիլիսոփայական բանաստեղծություններից կարդացին մագիստրատուրայի եւ բակալավրիատի 15 ուսանողներ: Աննա Սարգսյանը հանդես եկավ նաև «Տիեզե՞րքն է անսահման, թե՞...» զեկուցումով՝ կարևորելով հեղինակի՝ մայրերգության միջոցով ապագա սերունդների մեջ հայրենասիրություն ներարկելու գրողական հանձնառությունը:

Հանդիսությունն ուղեկցվում էր բանաստեղծին նվիրված տեսապատկերների ցուցադրությամբ:

Միջոցառման ավարտին ելույթ ունեցավ բանասիրական ֆակուլտետի դեկան, դոցենտ Աշոտ Գալստյանը: Նա արժևորեց բանաստեղծի ներկայությունը մեր աշխարհում որպես երևույթ և հորդորեց անգամ մանկական երգերի մեջ որսալ ժամանակի տագնապն ու բանաստեղծի սիրտը: Սա արդեն վաղվա մանկավարժին ուղղված պատգամ է, որը թրծվում է հենց այսպիսի լսարաններում:

Հանդիպման հերոս Սուրեն Մուրադյանը շնորհակալություն հայտնեց կազմակերպիչներին, մասնավորապես երեխաներին և ուսանողներին, որոնք իր դեսպանն են հայ կրթական և մշակութային բոլոր օջախներում: Նա չմոռացավ, որ ինքը այս համալսարանի սանն է և անուն առ անուն հիշեց իր ուսուցիչներին, որոնք նկարագիր են ձևավորել և ստեղծագործական ավազան կերտել: Նա նաև ներկայացրեց իր՝ օրվան համահունչ բանաստեղծություններից երկուսը:

Բանասիրական ֆակուլտետի ՈՒԳԸ

ՆՈՐ ԳՐՔԵՐ

«ԼԵՌՆԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖՏՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ»

Աշոտ Խոեցյան, Սուսաննա Խաչատրյան, մենագրություն, Երևան, 2016



ՀՊՄՀ աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի մագիստրատուրան նոր ուսումնական տարուց կհամալրվի «Լանդշաֆտային պլանավորում» մասնագիտությամբ:

20-րդ դարի երկրորդ կեսից մարդածին ծանրաբեռնվածության հարաճուն մեծացման հետևանքով բնատարածքային համալիրները արագ դեգրադացվելով, կորցնում են իրենց տնտեսական ներուժը՝ այդպիսով խարխլելով հասարակության զարգացման նյութական հիմքերը: Պահանջվում են բնօգտագործման կազմակերպման նոր, առաջադեմ մոտեցումներ: Դրանցից մեկը «լանդշաֆտային պլանավորումն» է, որը մի քանի տասնյակ տարի լայնորեն կիրառվում է եվրոպական բազմաթիվ երկրներում: 2004 թվականից լանդշաֆտային պլանավորումը պաշտոնապես ամրագրվել է ՀՀ տարածքային պլանավորման փաստաթղթերում, ինչը խոսում է գործնական բնագավառում նրա արդիականության մասին: Այն հանդիսանում է աշխարհագրական տարածքային պլանավորման համալիր ձևերից մեկը՝ ուղղված լանդշաֆտային երկրահամակարգերի արդյունավետ բնօգտագործմանը և դեգրադացման կանխմանը: Լանդշաֆտային պլանավորման նպատակային հիմնադրույթը կայուն տարածքային զարգացման գաղափարի գործնական իրականացումն է՝ հիմնված հասարակության կարիքների տնտեսական գործունեության և շրջակա միջավայրի միջև ներդաշնակ հարաբերությունների վրա:

Լանդշաֆտների պլանավորման թեման հատկապես արդիական է այն առումով, որ դրանով սկիզբ է դրվում ՀՀ-ում լեռնային խիստ բազմազան, բայց արագ դեգրադացվող լանդշաֆտների նպատակային օգտագործման կարգավիճակների հաստատմանն ըստ մարզերի:

Մագիստրոսական կրթական ծրագրի արդյունավետ իրականացմանը մեծապես կնպաստի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Խոյեցյանի, ԵՊՀ դասախոս, աշխարհագրական գիտությունների թեկնածու Սուսաննա Խաչատրյանի հետ համահեղինակությամբ «Լեռնային լանդշաֆտների պլանավորման սկզբունքները» խորագրով հրատարակած մենագրությունը:

Գրքում ներկայացված են լեռնային լանդշաֆտների նպատակային օգտագործման օպտիմալացման ուղիները լեռնային մոդելային տեղամասի օրինակով: ՀՀ-ում կառավարման մարզային մակարդակը դիտվում է իբրև առավել շահագրգիռ օղակ տարածաշրջանային զարգացման կայունության գործում: Որպես մոդելային տեղամաս ընտրված է ՀՀ Արագածոտնի մարզի տարածքը:

Աշխատանքը կարող է օգտակար լինել աշխարհագրության, տնտեսագիտության, շրջակա միջավայրի պահպանության, տարածքային կառավարման մասնագետների, բուհերի դասախոսների և ուսանողների համար:

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
Էլ. փոստ՝ asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է:
Թերթը չի վաճառվում:
Հանձնված է տպագրության 17.11. 2016 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am